ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» ապրիլի 2022թ. N 188/ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 16-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի շախմատի ակադեմիայի 2022 թվականի ապրիլի 8-ի հ. 22/43 «Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 16-րդ օլիմպիադայի անցկացման կանոնակարգի մասին» գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2022թ. ապրիլ-2022թ. նոյեմբեր ամիսներին անցկացնել Արցախի Հանրապետության դպրոցականների շախմատի 16-րդ օլիմպիադան:

2. Հաստատել Արցախի Հանրապետության դպրոցականների շախմատի 16-րդ օլիմպիադայի I-III փուլերի անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության շախմատի մասնագետ, պետական ավագ տեսուչ Բ. Մելքումյանին՝ իրականացնել օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումը, «Հայաստանի շախմատի ակադեմիայի» հետ համատեղ համակարգել օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացը:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ա. Հակոբյան